

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Դարձեալ Քաղաքական Ահաբեկչութեան Մասին

Անցեալ շաբաթ, մեր այս սիւնակով գրած էինք 1999 թուականի Հոկտեմբեր 27-ին Ազգային ժողովի դահլիճէն ներս տեղի ունեցած ահաբեկչութեան մասին, որուն զոհ զացին Խորհրդարանի եւ կառավարութեան ղեկավարութիւնը՝ անշրջելի հարուած հասցնելով Հայաստանի հեղինակութեան ու պետականութեան: Այդ առթիւ յոյս կը յայտնէինք, որ նման երեւոյթներ կրկնութիւն չեն ունենար: Սակայն, դժբախտաբար տակաւին կան ուժեր, որոնք կը շարունակեն գործել «նպատակը կ'արդարացնէ միջոցը» սկզբունքով ու պատրաստ են դիմելու ծայրայեղ քայլերու:

Վերջին օրերուն Հայաստանի Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը հաղորդեց, որ բացայայտուած է ահաբեկչութեան նախապատրաստութիւն, որ կը ծրագրէր կազմալուծել իշխանութեան գործունէութիւնը՝ պայթում եւ սպանութիւն կատարելով: Ահաբեկչական այս գործողութիւնը ունեցած է նաեւ «Հիւսիսային տերեւաբախ» անուանումը: Ձերբակալուածները առ այժմ հինգ հոգի են, սակայն կը կարծուի որ, կան նաեւ այլ մեղսակիցներ: Խուզարկութեան ընթացքին գրաւուած փաստաթուղթերուն մէջ նշուած կայ ժողովրդի Սեֆիլեանի գլխավորած Ազգային ժողովրդավարական Բեւեռ կազմակերպութեան:

ԱՄԾ-ի կողմէ հարցաքննուելէ ետք Սեֆիլեան կը հերքէ իրենց կապը ձերբակալուածներուն հետ: Այս առթիւ Փաշինեանին ուղղելով իր խօսքը ան կ'ըսէ. «Վստահ եղիք, որ մենք քո ետեւից հինգ հոգով չենք գալու, գալու ենք տասնեակ հազար մարդկանցով»: Սեֆիլեան եւ իր նմանները պէտք է հաւատարիմ ըլլան այդ սկզբունքին եւ տասնեակ հազարներով հաւաքուին Հանրապետութեան հրապարակին վրայ եւ այդ ատեն թերեւս հասնին իրենց ձգտած իշխանափոխութեան: Սակայն, վերջին տարիներուն Բեւեռը ամենէն շատ կարողացած է հաւաքել մի քանի հարիւր հոգի:

Հոս կարծէ յիշեցնել որ, մինչեւ 2018-ի թաւշեայ յեղափոխութիւնը ժողովրդի Սեֆիլեանը եւ իր «Սասնայ Օճերու» ընկերներէն շատեր կը գտնուէին նախկին ռեժիմի բանտերուն մէջ: Անոնք ազատ արձակուեցան միայն իշխանութեան հաստատուելէն ետք միայն, սակայն առաջին օրէն իսկ

Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը Կը Հաղորդէ Ահաբեկչութեան Նախապատրաստութիւն Բացայայտելու Մասին

Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը (ԱՄԾ) կը հաղորդէ, որ ահաբեկչութեան նախապատրաստութիւն բացայայտած է:

Ըստ իրաւապահներու, խուճաբի արդէն կալանաւորուած հինգ եւ ինքնուրուի չկարգուած այլ անձեր ծրագրած են կազմալուծել իշխանութեան գործունէութիւնը՝ նախապատրաստելով պայթում եւ հանրութեան համար վտանգաւոր արարք:

Ահաբեկիչները, ըստ իրաւապահներու, պէտք է զաւթէին պետական նշանակութեան եւ այլ շինութիւններ՝ սպաննելով քաղաքացիական անձ:

Հինգ կալանաւորուածներու անուններու միայն առաջին տառերը հրապարակուած են, տեսանիւթին մէջ անոնց ձայնը փոխուած է, դէմքը՝ փակուած: Ընդ որում, ահաբեկչական գործողութիւնը «Հիւսիսային տերեւաբախ» անուանումը ունեցած է, չէ յատկացուած՝ արդեօ՞ք հիւսիս ըսելով նկատի առնուած է Ռուսաստանը:

Ըստ հրապարակուած ձայնագրութիւններուն՝ խուճաբ ունեցած է արտերկրեայ հովանաւորներ: Ահաբեկչական գործողութիւններուն աւելի լայն զանգուածներ ներգրաւելու համար, ըստ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան, ծրագրուած է ստեղծել ուղբանական, մոլորակական թելեկ-



ԱՄԾի աշխատակիցները կը ձերբակալեն կասկածեալներն մէկուն

րամեան ալիքներ՝ «Ազգային փրկութեան ապստամբութիւն» անուանումներով, եւ աշխուժացնել զանոնք ահաբեկչութեան նախորդ գիշերը, ինչպէս նաեւ ներգրաւել Ազգային ժողովրդավարական Բեւեռի աքթիվիստները. յամենայն դէպս նկարահանումներուն մէջ երեւցող փաստաթուղթին մէջ քաղաքական այս միաւորին անունը նշուած է:

Իրաւապահներուն փոխանցմամբ՝ ծրագրուած էր նաեւ յանցաւոր խումբի անդամներու ընտանիքներու տեղափոխումը Վրաստան:

Խուզարկութիւններով յայտնաբերուած է ռազմամթերք՝ այդ շարքին հրազէն, պայթուցիկ, հրթիռի արձակման սարք: Հրապարակուած ձայնագրութեան մէջ տղամարդիկ, ըստ ամենայնի, կը քննարկեն անօդաչու սարքով պայթում կազմակերպելու տարբերակը:

Ազգային Անվտանգութեան Ծառայութեան հրապարակած մէկ այլ ձայնագրութեան մէջ ալ, ամենայն հաւանականութեամբ, կասկածեալները շէնքի տարածք կը դիտարկեն. «Ես գիտեմ այն էս

Երուսաղէմի Պատրիարքութեան Պատկանող «Կովերու Պարտեզ» Անունով Յայտնի Կալուածի Շուրջ Կիրքերը Բորբոքած Են



Սրբոց Յակոբեանց Սիւրբանութեան անդամները եւ հայ համայնքի ներկայացուցիչները հաւաքուած՝ հայապատկան կալուածին մօտ

Երուսաղէմի Հայոց պատրիարքարանի դիւանապետ Աղան Գոգչեանը տեղեկացուցած է, որ Երուսաղէմի պատրիարքութեան պատկանող «Կովերու պարտեզ» անունով յայտնի կալուածի վարձակալութիւնը չեղարկելու նամակէն յետոյ երկրորդ կողմը նամակին պատասխան տալու փոխարէն սկսած է կալուածի պարիսպը եւ

կալանատեղերը քանդել, ասֆալթը հեռացնել՝ սպառնալով շատ աւելի մեծ վնաս պատճառել:

Երուսաղէմի Հայոց պատրիարքարանի դիւանապետ Աղան Գոգչեան հաղորդագրութիւն տարածեց, որուն որուն մէջ գրառած էր. «Երուսաղէմի Հայոց Պատրի-

Արմէն Գրիգորեան Պիտի Չմասնակցի ԱՊՀ Պետութիւններու Ան Քարտուղարներու Հերթական Հանդիպման

Հայաստանի Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեան պիտի չմասնակցի Նոյեմբեր 8-ին Մոսկուայի մէջ կայանալիք Անկախ Պետութիւններու Համագործակցութեան (ԱՊՀ) մասնակցի պետութիւններու Անվտանգութեան Խորհուրդի քարտուղարներու հերթական հանդիպման:

Այս մասին յայտնեց Հայաստանի Անվտանգութեան Խորհուրդի քարտուղարի մամուլի խօսնակ Տաթևիկ Պետրոսեանը:

«Հայաստանի Անվտանգութեան Խորհուրդի քարտուղար Արմէն Գրիգորեանը չի մեկնի Մոսկուա եւ չի մասնակցի Նոյեմբերի 8-ին Ռուսաստանի Դաշնութեան մայրաքաղաք Մոսկուայում տեղի ունենալիք ԱՊՀ մասնակցի պետութիւններու Անվտանգութեան Խորհուրդի քարտուղարների հերթական հանդիպմանը», նշեց Պետրոսեան:

ԼՈՒՐԵՐ

Ժիրայր Սէֆիլեան Մեկնաբանած է «Բեւեռի» Մասնակցութիւնը ԱԱԾ-ի Յայտնած Ահաբեկչութեան Գործին

Նոյեմբեր 2-ին ԱԱԾ-ն հաղորդագրութիւն տարածած էր, որ բացայայտուած է նախնական համաձայնութեամբ խումբի կազմին մէջ ահաբեկչութեան նախապատրաստութիւն կատարելու դէպք:

Յանցաւոր խումբի հինգ անդամներու նկատմամբ ՀՀ Քրէական օրէնսգիրքի համապատասխան յօդուածով յարուցուած են հանրային քրէական հետապնդումներ, ներկայացուած՝ մեղադրանքներ: Վերջիններուս նկատմամբ որպէս խափանման միջոց կիրառուած է կալանքը:

ԱԱԾ-ի հրապարակած տեսագրութեան մէջ կ'երեւէին փաստաթուղթեր, որոնց վրայ կար Ազգային ժողովրդավարական Բեւեռի անունը:

Ազգային ժողովրդավարական Բեւեռի առաջնորդներէն ժիրայր Սէֆիլեանը, «Ազատութեան» հարցումին ի պատասխան, տեղեկացուցած է, որ «ահաբեկչութեան գործի» շրջանակին մէջ որպէս վկայ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան մէջ (ԱԱԾ) հարցաքննուած է:

Ան հերքած է Բեւեռի մասնակցութիւնը այդ գործին:

Սէֆիլեան ըսած է, որ կալանաւորուածներէն երկուքը կը ձանձնայ, բեւեռական չեն, բայց վերջին շրջանին շփումներ ունեցած են իրենց հետ վարչապետ Նիկոլ Փաշինեանի իշխանութեան հեռացման շուրջ:



Ազգային ժողովրդավարական Բեւեռի առաջնորդներէն ժիրայր Սէֆիլեան

Սէֆիլեան չի կարծեր, թէ անոնք իսկապէս փորձած են ահաբեկչութիւն կատարել:

Ժիրայր Սէֆիլեանի առաջնորդած բեւեռին մաս կը կազմեն նաեւ «Սասնայ ծուր» զինուած խումբի շարք մը անդամներ, որոնք 2016 թուականին Երեւանի մէջ գրաւեցին Ոստիկանութեան գունդի տարածքը՝ յայտարարելով, թէ կը պայքարին, որ այն ժամանակուան իշխանութիւնները չչանձնեն Արցախը: Այս գործողութեան հետեւանքով երեք ոստիկան զոհուեցաւ: Խումբին անդամները դատապարտուած են 6-8 տարուան բանտարկութեան:

Հայաստանի Մէջ Ամենամեծ Ներդրումներու Աղբիւրը ԱՄԵ-ն Է

Հայաստանի մէջ այս տարուան Յունուար-Օգոստոս ամիսներու ամենամեծ օտարերկրեայ ուղղակի ներդրումներու աղբիւրը եղած է Արաբական Միացեալ Էմիրութիւնները:

Այս մասին յայտնեց Հայաստանի տնտեսութեան նախարար Վահան Քերրեան Ազգային ժողովի մշտական յանձնաժողովներու համատեղ նիստին ընթացքին, 2024 թուականի պետական պիւտձէի մասին օրէնքի նախագիծին նախնական քննարկումներուն՝ ներկայացնելով Յունուար-Օգոստոսի ցուցանիշերը:

ԵԱՏՄ երկիրներէն օտարերկրեայ ուղղակի ներդրումներու գուտ հոսքերու ծաւալը կազմած է 305 միլիոն տոլար:

«Ռուսաստանից օտարերկրեայ ուղղակի ներդրումների գուտ հոսքերի ծաւալը կազմել է 250 միլիոն տոլար: Բայց առաջին անգամ մեր պետութեան մէջ Հայաստանի Հանրապետութիւնում ամենախոշոր օտարերկրեայ ուղղակի ներդրումների աղբիւրը կազմել է Արաբական Միացեալ Էմիրութիւնները», ըսաւ նախարարը՝ յաւելելով, որ Ռուսաստանը այժմ կը գտնուի երկրորդ տեղը:

Հայաստանի եւ Եւրոմիութեան միջեւ 2023 թուականի 9 ամիսներու ընթացքին ապրանքաշրջանառութիւնը կազմած է շուրջ 2,1 միլիարտ տոլար, ինչ որ 40 տոկոսով աւելի է՝ նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին համեմատ:

Այս մասին, Ազգային ժողովին մէջ, 2024 թուականի պետական պիւտձէի նախագիծի քննարկման ժամանակ յայտնեց Հանրապետութեան տնտեսութեան նախարար Վահան Քերրեանը:

«Եթէ ԵՄ-ն ընդունինք որպէս միասնական շուկայ, ապա այն, ըստ էութեան, Ռուսաստանէն յետոյ Հայաստանի երկրորդ մեծ առեւտրային գործընկերն է: Գոհունակութեամբ պէտք է նշեմ, որ ԵՄ անդամ առանձին առաջատար երկիրներու հետ մեր առեւտուրը կ'աճի», ըսաւ Քերրեանը:

ՊԵԿ-ը 2023-ի Առաջին 10 Ամիսներուն Ապահոված Է Մօտ 4,5 Միլիարտ Տոլար Հարկային Եկամուտներ Եւ Պետական Տուրքեր

2023 թուականի Յունուար-Հոկտեմբեր ամիսներու ընթացքին Հայաստանի Պետական Եկամուտներու կոմիտէին (ՊԵԿ) կողմէ ապահովուած են 1 թրիլիոն 793,6 միլիարտ դրամ (4 միլիարտ 484 միլիոն տոլար) հարկային եկամուտներ եւ պետական տուրքեր, ինչ որ նախորդ տարուան նոյն ժամանակաշրջանի ցուցանիշէն աւելի է 234,4 միլիարտ դրամով կամ 15 տոկոսով:

ՊԵԿ տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու բաժնի հաղորդագրութեան համաձայն՝ 2023-ի առաջին տասը ամիսներուն հարկ վճարողներուն եւ ֆիզիքական անձերու վերադարձուած է շուրջ 305 միլիարտ դրամ, ինչ որ նախորդ տարուան նոյն ժամանակաշրջանի ցուցանիշէն աւելի է 92,6 միլիարտ դրամով կամ 43,6 տոկոսով:

Լեւոն Քոչարեան Պատգամաւորական Մանտաթ Ստացաւ Ու Ազատ Արձակուեցաւ

Կեղրոնական Ընտրական Յանձնաժողովին որոշմամբ Լեւոն Քոչարեանը Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութենէն մանտաթ ստացաւ:

«ԿԸՅ-ն արձանագրում է՝ ԱԺ «Հայաստան» դաշինքի մանտաթը տրուում է հերթական յաջորդ թեկնածու Լեւոն Ռոպերթի Քոչարեանին», ըսաւ ԿԸՅ նախագահ Վահագն Յովակիմեանը:

Լեւոն Քոչարեանը ՀՀ երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի կրտսեր որդին է, որ ընդդիմութեան ցուցերուն ընթացքին ոստիկաններու հարուածելու մեղադրանքով կը գտնուէր անազատութեան մէջ:

Լեւոն Քոչարեանի փաստաբանական խումբի յայտարարութեան համաձայն՝ 2023 թուականի Նոյեմբեր 6-ին պատգամաւորի կարգավիճակ ձեռք բերելու պահէն, ան չի կրնար պահուիլ անազատութեան մէջ:

Արմէն Չարչեանի մանտաթը պիտի անցնէր Հայաստան դաշինքի նախընտրական ցուցակի յաջորդ անդամին, սակայն նոյն դաշինքի յաջորդ 3 անդամները՝ Միհրդատ Մատաթեանը, Անժելա Նալպանտ-



Պատգամաւորական մանտաթ ստացած՝ Լեւոն Քոչարեան

եանը եւ Գերասիմ Վարդանեանը հրաժարեցան պատգամաւորի մանտաթէն, որպէսզի պատգամաւոր սարքեն Լեւոն Քոչարեանը: Այսպիսով սոյն դաշինքը եւս մէկ անգամ ապացուցեց, որ կը ծառայէ բացառապէս Քոչարեանի ընտանիքի շահերուն, իսկ Քոչարեան կրտսերը պատգամաւոր սարքելով կ'ուզեն վերջինս ազատել քրէական պատասխանատուութենէն:

Հայաստանի Մէջ Ծնունդները 8700-ով Գերազանցած Են Մահերու Ցուցանիշը



Ընթացիկ տարուան Յունուար-Մեպտեմբեր ամիսներու ընթացքին Հայաստանի Հանրապետութեան մէջ 26 հազար 882 ծնունդ արձանագրուած է: Այս մասին տեղեկացուցած է ՀՀ Վիճակագրական կոմիտէն:

Աղբիւրին տեղեկատուութեամբ՝ մահերուն ցուցանիշը նոյն ժամանակահատուածին կազմած է 18 հազար 107:

Այս տարուան ինը ամիսներու ընթացքին հանրապետութեան մէջ ամուսնութեան 12 հազար 19 դէպք արձանագրուած է, իսկ ամուսնա-

լուծութեան՝ 3 հազար 363: Սահմանային անցակետերով իրականացուած գրանցումներու համաձայն՝ հաշուետու ժամանակահատուածին մէջ հանրապետութիւն մուտք գործած մարդոց թիւը 3 միլիոն 671 հազար 691 է, իսկ ելքերու ցուցանիշը կը կազմէ 3 միլիոն 682 հազար 325:

ԱԱԾ Կազմին Մէջ Ստեղծուած Է Եւ Կը Գործէ Յատուկ Ստորաբաժանում

Հայաստանի Ազգային Անվտանգութեան Ծառայութեան կազմին մէջ ստեղծուած է եւ նախօրէն կը գործէ յատուկ ստորաբաժանում՝ ապահովելու Հայաստանով անցնող տարածաշրջանային եւ միջազգային հաղորդակցութիւններու անվտանգութիւնը, կառավարութեան նիստին ժամանակ տեղեկացուց վարչապետ Նիկոլ Փաշինեան:


«Ես ներկայացրել էի, որ մենք նախատեսում ենք Հայաստանի ԱԱԾ-ի կազմում ստեղծել ստորաբաժանում, որի գործառնչութիւնը պէտք է լինի Հայաստանով անցնող տարածաշրջանային եւ միջազգային հաղորդակցութիւններին՝ այն է ճանապարհների, երկաթգծերի, կազմուղերի, մալուխների, ելեկտրահաղորդման գծերի, ինչպէս նաեւ այս հաղորդակցութիւններով



ապրանքների, բեռների, փոխադրամիջոցների եւ մարդկանց անցման անվտանգութիւնը ապահովելը: Այդ ստորաբաժանումն արդէն ստեղծուած է, շօշափելի մասով համալրուած է եւ երէկուանից սկսել է իր աշխատանքը», ըսաւ Փաշինեան:

ԼՈՒՐԵՐ

Փաշինեան Ընդունած Է ԵԽՏՎ Դիտորդական Յանձնաժողովի Համազեկուցողները



Վարչապետի հանդիպումը ԵԽՏՎ-ի Դիտորդական Յանձնաժողովի համազեկուցողներուն հետ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ընդունած է ԵԽՏՎ-ի Դիտորդական Յանձնաժողովի Դիտորդական Յանձնաժողովի Հայաստանի հարցերով համազեկուցողներ Քիմ Գրիլիսենը եւ Պորիանա Ապերկը:

Վարչապետը ողջունած է համազեկուցողներուն աչքը Հայաստան եւ կարեւորած է ՀՀ կառավարութեան ու ԵԽՏՎ-ի խորհրդակցութեան սերտ համագործակցութիւնը, մասնաւորապէս, ժողովրդավարական բարեփոխումներու արդիւնաւէտ յառաջմղման եւ այլ ուղղութիւններով: Նիկոլ Փաշինեան ընդգծած է, որ ժողովրդավարութեան զարգացումն ու բարեփոխումներու օրակարգը ՀՀ կառավարութեան ռազմավարութիւնն է եւ հետեւողական աշխատանքները այդ ուղղութեամբ պիտի կրեն շարունակական բնոյթ: Վարչապետը ներկայացուցած է ՀՀ կառավարութեան կողմէ հակափտածութեան քաղաքականութեան շրջանակներուն մէջ իրականացուած եւ նախատեսուող քայլերը:

Վարչապետը վստահութիւն յայտնած է, որ բարեփոխումները նպաստած են նաեւ Հայաստանի մէջ տնտեսութեան ոլորտին մէջ ազատ մրցակցային միջավայրի ձեւաւորման եւ արձանագրուող տնտեսական աճին:

Նիկոլ Փաշինեան անդրադարձած է Լեւոնային Ղարաբաղի մէջ Ատրպէյճանի կողմէ ցեղային գտման քաղաքականութեան հետեւանքով 100 հազարէ աւելի լՂ մեր հայրենակիցներու բռնի տեղահանութեան ու ստեղծուած մարդասիրական իրավիճակին, անոր յաղթահարման ուղղութեամբ Հայաստանի կառավարութեան կողմէ իրականացուող քայլերուն: Կարեւորուած է միջազգային հանրութեան օժանդակութիւնը առկայ խնդիրներու լուծման գործին մէջ: Վարչապետը ընդգծած է նաեւ Լեւոնային Ղարաբաղի մէջ հայու թեւաւորումներու վերաբերեալ ԵԽՏՎ-ի մէջ ընդունուած բանաձեւերուն կարեւորութիւնը:

Պաքուն Կը Յայտարարէ, Թէ Երեւանէն Դեռ Պահանջներ Ունի

Ստեփանակերտի եւ այլ քաղաքներու մէջ նախատեսուած զօրահանդէսին ընդառաջ Պաքուն յաղթական յայտարարութիւն տարածած է՝ պնդելով, որ 2020-էն ի վեր հասած է իր նպատակներուն ու վերականգնած է Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը: Միաժամանակ, պաշտօնական յայտարարութիւնը ընդգծած է, որ Պաքուն Երեւանէն դեռ ստանալիք ունի:

«Հայաստանը մերժած է վերադարձնել ատրպէյճանական 8 գիւղեր, որոնք մինչ այժմ բռնագրաւման տակ են», ըսուած է յայտարարութեան մէջ:

Ատրպէյճանի նախագահի պաշտօնական կայքին համաձայն՝ ղարաբաղեան առաջին պատերազմէն յետոյ հայկական կողմը «բռնագրաւած է Ղազարի շրջանի եօթը գիւղերն ու մէկ գիւղ Նախիջևանի Սաղարակի շրջանին մէջ»:

Երեւանէն կը հակադարձեն, թէ հայկական կողմն ալ 90-ականներէն բռնագրաւուած տարածքներ ունի Ատրպէյճանի մէջ:

«Մենք էլ մեր հերթին ասում ենք, որ մենք էլ 8 գիւղերի խնդիր ունենք, որովհետեւ նոյն Տաուշի մարզում մենք ունենք Ատրպէյճանի կողմից բռնագրաւուած տարածքներ

Բերքաբեր գիւղում, Այգհնովիտ գիւղում, Վազաշէն գիւղում, Պառաւաքար գիւղում, այլ տարածքներում նոյնպէս», ըսած է վարչապետ Նիկոլ Փաշինեան:

Անցեալ ամիս Հանրայինին տուած հարցազրոյցին ու նաեւ անկէ առաջ վարչապետը յայտնած էր, որ հայկական կողմը կ'առաջարկէ այդ տարածքները փոխանակել, փաստացի՝ համաձայնիլ, որ Հայաստանի վերահսկողութեան տակ անցածը մնայ Հայաստանին, Ատրպէյճանն ալ տնօրինէ հայկական տարածքները:

Պաքուն, սակայն, շարունակաբար ու նաեւ այս յայտարարութեամբ կ'ընդգծէ, թէ այդ տարբերակին համաձայն չէ: Չբացաչափելով Հայաստանի հետ խաղաղութեան պայմանագրի շուրջ բանակցութիւններուն մանրամասնութիւնները՝ Ատրպէյճանը յորդորած է Երեւանին արդար ու կառուցողական ըլլալ եւ ճիշդ ըմբռնել տարածաշրջանային իրողութիւնները:

«Հայկական կողմը պէտք է վերջապէս դիտակցի, որ տարածաշրջանին մէջ խաղաղութիւնն ու համագործակցութիւնը այլընտրանք չունին», շեշտած է Պաքուն:

ԱՄՆ Բարձրաստիճան Զինուորականը Յայտնած Է Պատրաստականութիւնը՝ Հայաստանի Հետ Ռազմական Համագործակցութեան



ՀՀ Զինուած Ուժերու Գլխաւոր Շտաբի պետ՝ զօրավար Էտուարտ Ասրեանի հանդիպումը ԱՄՆ-ի զինուորականերուն հետ

ՀՀ Զինուած Ուժերու Գլխաւոր Շտաբի պետ, զօրավար-լեյթենանթ էտուարտ Ասրեանը Նոյեմբեր 1-3-ին այցելած է Շթոլթկարտի մէջ տեղակայուած ԱՄՆ եւրոպական հրամանատարութեան կեդրոնական՝ ԱՄՆ եւրոպական հրամանատարութեան հրակերպ:

Պաշտպանութեան նախարարի առաջին տեղակալը հանդիպած է ԱՄՆ եւրոպական հրամանատարութեան հրամանատարի տեղակալ, զօրավար-լեյթենանթ Սթիվըն Պաշամի հետ, քննարկած է հայ-ամերիկեան ռազմական համագործակցութեան զարգացման առնչուող հարցեր:

էտուարտ Ասրեան ներկայացուցած է Հայաստանի զինուած ուժերուն մէջ տեղի ունեցող բարեփոխումներու վերաբերեալ մանրամասնութիւններ եւ անոնց ընթացքին ԱՄՆ-էն ակնկալուող աջակցութիւնը: Սթիվըն Պաշամ յայտնած է ԱՄՆ-ի պատրաստա-

կամութիւնը՝ համագործակցութեան ընթացիկ ծրագրերուն աջակցութիւնը շարունակելու, նաեւ նախաձեռնելու համագործակցութեան նոր ուղղութիւններ հետեւեալ ոլորտներուն մէջ՝

զինուած ուժերու արհեստավարժացում, արհեստավարժ սերժանտական կազմի ամրապնդում, ղեկավարման համակարգի արդիականացում, խաղաղապահութիւն, ռազմական բժշկութիւն, ռազմական կրթութիւն ու մարտական պատրաստութիւն, վարժանքներ եւ այլն:

Քննարկուած են նաեւ տարածաշրջանային անվտանգութեան առնչուող հարցեր:

Այցի շրջանակին մէջ զօրավար-լեյթենանթ էտուարտ Ասրեան այցելած է նաեւ Հոնոլուլուի մէջ տեղակայուած Եւրոպայի մէջ ԱՄՆ ցամաքային զօրքերու միացեալ բազմազգ պատրաստութեան կեդրոն եւ սերժանտական ակադեմիա:

Վազիֆ Խաչատրեանի Դատավարութեան Չեն Յարգուած Միջազգային Իրաւական Կանոններն Ու Մարդու Իրաւունքներու Երաշխիքները. ՄԻՊ

Վազիֆ Խաչատրեանին 15 տարուան բանտարկութեան դատաւարտելու Պաքուի դատարանի որոշման անդրադարձած է Հայաստանի մարդու իրաւունքներու պաշտպանը:

Անահիտ Մանասեանը X-ի իր էջով գրած է, որ դատավարութեան ընթացքին չեն յարգուած միջազգային իրաւական կանոններն ու մարդու իրաւունքներու երաշխիքները: Պաշտպանը յորդորած է միջազգային կազմակերպութիւններուն անյապաղ արձագանգել:

Ատրպէյճանցիները Վազիֆ Խաչատրեանը առեւանգեցին Հաքարիի կամուրջէն, երբ ան ամառը Արցախէն Հայաստան կու գար սրտի բաց վիրահատութեան համար:

Պաքուն արցախցին կը մեղադրէ «ցեղասպանութեան» յօդուածով, մասնաւորապէս՝ «1991-ին Մեշարի գիւղի վրայ զինուած յարձակման համար, որուն հետեւանքով 25 ատրպէյճանցի սպաննուած է»:

Փաստացի իր շահերը միայնակ պաշտպանող Վազիֆ Խաչատրեանը դատարանին մէջ բազմիցս հերքած է իր մասնակցութիւնը Մեշարիի դէպքերուն, պնդելով՝ ինքը այդ



Վազիֆ Խաչատրեան Պաքուի դատարանին մէջ

օրերուն կը գտնուէր Շուշիի բանտը:

«Ես անմեղ մարդ եմ, ես էնտեղ չեմ մասնակցել, ես չեմ եղել էնտեղ: Ինձ ձերբակալեցին, ոչ թէ ես հասեցիքիչ, ես Բաղարա գիւղացի էի, ինձ բռնեցին որպէս բաղարացի, Բաղարացի բնակիչ», ըսաւ ան:

Տարեց արցախցին նոյնիսկ խնդրեց իրեն յատուկ սարքերով ստուգել, որ չի ստեր, Մեշարիի մէջ չէ եղած, ոեւէ մէկուն չէ սպաննած:

Գերմանիան Հանդէս Կու գայ, Որ Մազլցուն Զըլլայ Տարածաշրջանին Մէջ. Կ'ըսէ Գերմանիոյ Արտաքին Գործերու Նախարար Պերպոք



Գերմանիոյ եւ Հայաստանի արտաքին գործոց նախարարներու մամուլային ասուլիսը

«Ես հանդէս կու գամ, որ մազլցուն տեղի չունենայ այս տարածաշրջանին մէջ, որ այս պատահանքը օգտագործուի խաղաղութեան համար», Հայաստանի մէջ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանի հետ համատեղ ասուլիսին ընթացքին ըսաւ Գերմանիոյ արտաքին գործերու նախարար Աննալենա Պերպոքը:

Նախարարը, ըստ հովանի, ուղիղ չպատասխանեց հարցումին, թէ արդեօք Գերմանիան պատրաստ է կանգնեցնելու քարիւղի ու կազի ներկրումը եւ պատժամիջոցներ սահմանելու Ատրպէյճանի դէմ, եթէ յարձակում տեղի ունենայ Հայաստանի վրայ:

«Գերմանիան կը պաշտպանէ Հայաստանի եւ Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը եւ կանգնած է այդ երկու երկրներու կողքին, որպէսզի խաղաղութեան համաձայնագիրը ստորագրուի», ըսաւ ան:

«Որպէս Գերմանիա՝ մենք

նոյնպէս կը զգանք, թէ ինչքանով կախուած ենք Ռուսաստանէն, եւ գիտենք Հայաստանի մասով եւս, բայց մէկ օրուան մէջ այդ պիտի չփոխուի, բայց պէտք են ամուր գործընկերներ, մեր ուժանիւթային կախուածութենէն մենք ազատուած ենք», նկատեց ան:

Արարատ Միրզոյեան, իր հերթին, նշեց, որ այսօր ալ կան լուրջ մտավախութիւններ, որ Ատրպէյճանը դեռ տարածքային պահանջներու յաւակնութիւններ ունի Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ, կան վերապահումներ ՀՀ ինքնիշխանութեան նկատմամբ:

«Չնայած բոլոր բարդութիւններին, բոլոր մարտահրաւէրներին՝ ՀՀ-ն ունի քաղաքական կամք գնալ խաղաղութեան հասնելու, գնալ խաղաղութեան հաստատմանը», նշեց նախարարը:

Սա Պերպոքի առաջին այցն է Հայաստան, ապա ան պիտի մեկնի Ատրպէյճան:

Լեմքինի Զինարկի Ամենաբարձր Նախագուշացումը՝ Հայաստան Ներխուժման Մասին

Լեմքինի Յեղասպանութեան կանխարգիլման հիմնարկը կարմիր՝ ամենաբարձր նախագուշացումը յայտարարած է Պաքուի համար:

«Ատրպէյճանը վաղուց կը տենչայ Հայաստանի հարաւային Սիւնիքի մարզը, որ ոչ-վաղ անցեալին կը քննարկուէր որպէս վաչք, ուրիշ պիտի անցնէր Ատրպէյճանի կողմէ վերահսկող «Չանգեզուրի միջանցքը» դէպի Նախիջևան:

Հաշուի առնելով տարածաշրջանին մէջ տեղի ունեցող վերջին քաղաքական զարգացումները, այդ շարքին՝ 2023 թուականի Սեպտեմբեր 19-ին ատրպէյճանական ներխուժումը Արցախ եւ անոր յաջորդած տարածքի բռնազաւթումը, ինչպէս նաեւ Թուրքիոյ եւ Ատրպէյճանի մէջ տարածուած ցեղասպանական հայատեացութիւնը, մեծ վտանգ կայ, որ Ատրպէյճանի ներխուժումը կրնայ վերածուիլ ցեղասպանութեան:

Աշխարհին կը յիշեցնենք, որ ցեղասպանութիւնը միայն զանգուածային սպանութիւններու միջոցով չ'արտայայտուիր, ինչպէս եղաւ 2023 թուականի Սեպտեմբերին Արցախի/Լեռնային Ղարաբաղի վերջին բռնազաւթման ժամա-



նակ: Յեղասպանութիւնը կրնայ արտայայտուիլ նաեւ կոտորածի, վաչքագութեան եւ բնիկ տարածքներէն բռնի տեղահանման միջոցով, երբ այդ գործողութիւններու հիմքին ինկած գաղափարախօսութիւնը ուղղուած է ինքնութեան ամբողջական կամ մասնակի ոչնչացման:

Թէեւ Ատրպէյճանի պաշտօնեաները վերջերս իրենց հեռու կը պահեն Սիւնիքով անցնող «Չանգեզուրի միջանցքի» ծրագրէն, այնուամենայնիւ, անհանգստանալու քանի մը պատճառ կայ: Արցախի հայկական տարածքին դէմ Ատրպէյճանի յարձակողական պատերազմէն յետոյ, որ յանգեցուցած է հայ խաղաղ բնակիչներու դաժան սպանութիւններուն եւ գրեթէ ամբողջ հայ բնակչութեան բռնի տեղահանման, Ատրպէյճանը հրապարակայնօրէն իր հայեացքը ուղղած է Հայաստանի ամենահարաւային Սիւնիքի մարզին, որ ան կը համարէ իր սեփական տարածք՝ զայն անուանելով «արեւմտեան Ատրպէյճան»:

Ամենասարսափելին այն է, որ Ատրպէյճանը սկսած է ռազմական ուժեր կուտակել Հայաստանի հետ սահմաններու երկայնքով, ներառեալ Նախիջևանի ներգաւառին մէջ (որ սահմանակից է Թուրքիոյ): Անցեալ շաբաթ Ատրպէյճանը նաեւ Թուրքիոյ հետ համատեղ զորավարութիւններու շարք կա-

ԱՄՆ Եւ Անոր Ժողովրդավարական Դաշնակիցները Պետք Է Վճռականօրէն Աջակցին Երեւանին. The National Interest

Հայաստանի մէջ ներկայիս իրավիճակը ժողովրդավարութեան համար ճշմարտութեան պահ է: Վերջին իրադարձութիւնները, որոնց յաջորդած է Ատրպէյճանի կողմէ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ վերահսկողութեան ձեռք բերումը, տագնապալի միտում չարուցած են Հարաւային Կովկասի մէջ: Այդ յանգեցուցած է տեղի հայ բնակչութեան բռնի տեղահանման: Այս մասին գրած է «The National Interest» ամսագիրը:



տարածաշրջանի համար, կը գրէ ամսագիրը: Հայաստանի ժողովրդավարական արժէքներու եւ ինքնիշխանութեան պահպանման, ինչպէս նաեւ յետընթաց կանխելու համար կը մնայ շատ քիչ ժամանակ: Ժողովրդավարական գործընկերներուն համար չափազանց կարեւոր է առաջնահերթ կերպով աջակցութիւն ցուցաբերել Հայաստանին:

Այսօր Հայաստանը կանգնած է կրկնակի մարտահրաւէրներու առաջ՝ արտաքին յարձակման աճող սպառնալիքի, աճող ներքին հակասութիւններու տեսքով, եւ կը գտնուի ծայրայեղ իրավիճակի շեմին:

Միացեալ Նահանգներու եւ այլ ժողովրդավարական երկիրներու աջակցութեան բացակայութիւնը կրնայ բացասաբար ազդել ժողովրդավարութեան յառաջընթացին վրայ, հաւանական յանգեցնել յետընթացի եւ մենատիրութեան տիրոջ վերադարձի՝ Քրեմլինի ազդեցութեան ներքոյ:

Եւրոպայի հարաւարեւելեան ճակատին երբեք այսքան սուր չէ եղած օրէնքի գերակայութեան սկզբունքները պաշտպանելու անհրաժեշտութիւնը բռնի ուժով կառավարելու պարտադրանքէն: Միացեալ Նահանգներու եւ անոր ժողովրդավարական դաշնակիցներուն համար առանցքային է Երեւանին աջակցելու ամուր դիրքաւորումն ու Պաքուի յառաջխաղացումներուն դիմակայելը: Այդ հարցով անյաջողութիւնը կրնայ աղէտալի հետեւանքներ ունենալ ոչ միայն Հայաստանի, այլ նաեւ աւելի լայն

Ինչպէս կը գրէ «The National Interest»-ը, չափազանց կարեւոր է նշել, որ Ատրպէյճանը կ'օգտուի Թուրքիոյ աջակցութենէն, այն պարագային, երբ Ռուսաստանը՝ Հայաստանի աւանդական պաշտպանը, կը մնայ կողքի կանգնած:

Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանը Սեպտեմբեր 19-ին ՄԱԿ-ի Գլխաւոր վեհաժողովին մէջ իր ելոյթին ժամանակ, այն նոյն օրը, երբ Ատրպէյճանը սկսաւ Լեռնային Ղարաբաղի բռնազաւթումը, Հայաստանին կոչ ըրաւ բանալու «Չանգեզուրի միջանցքը»: Այնուհետեւ Սեպտեմբեր 25-ին Ալիեւն ու Էրտողանը հանդիպեցան Նախիջևանի մէջ, ուր նախագահ Ալիեւը անուղղակիօրէն յիշատակեց Հայաստանի տարածքով միջանցքի մասին, յիշեցուցած է ամսագիրը:

Հայաստանի Ինքնիշխանութեան Եւ Տարածքային Ամբողջականութեան Որեւէ Խախտում Պիտի Ունենայ Լուրջ Դեմադրանքներ. ԱՄՆ

Հայաստանի ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան որեւէ խախտում պիտի ունենայ լուրջ հետեւանքներ: Այս մասին յայտարարած է ԱՄՆ Պետական Քարտուղարութիւնը՝ պատասխանելով «Ամերիկայի ձայն»-ի հարցական ծառայութեան հարցումին:

«Միացեալ Նահանգները վճռականօրէն կ'աջակցին Հայաստանի ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան: Մենք ընդգծած ենք, որ այս ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան որեւէ խախտում պիտի յանգեցնէ լուրջ հետեւանքներու:

Մենք պարբերաբար կ'ընդգծենք մեր ակնկալիքները, օրինակ՝

ուժի կիրառման դէմ նախազգուշացումները, եւ մշտապէս կը հետեւինք իրավիճակին: Հայաստանը Միացեալ Նահանգներու մերձակոր գործընկերն է ու բարեկամը, եւ մենք համագործակցութեան յուսով ենք Հայաստանի իշխանութիւններուն հետ՝ Հայաստանի քաղաքական եւ տնտեսական անվտանգութիւնը ամրապնդելու համար», կ'ըսուի Պետական Քարտուղարութեան մեկնաբանութեան մէջ:

Յիշեցնենք, որ Լեմքինի Յեղասպանութեան կանխարգիլման հիմնարկը կարմիր դրօշի ահազանգ հնչեցուցած է յայտարարած էր, որ յառաջիկայ օրերուն եւ շաբաթներուն Ատրպէյճանի կողմէ Հայաստան ներխուժման անհանգստացնող հաւանականութիւն կը տեսնէ:

է Հայաստանի ամենահարաւային Սիւնիքի մարզին, որ ան կը համարէ իր սեփական տարածք՝ զայն անուանելով «արեւմտեան Ատրպէյճան»:

Ամենասարսափելին այն է, որ Ատրպէյճանը սկսած է ռազմական ուժեր կուտակել Հայաստանի հետ սահմաններու երկայնքով, ներառեալ Նախիջևանի ներգաւառին մէջ (որ սահմանակից է Թուրքիոյ): Անցեալ շաբաթ Ատրպէյճանը նաեւ Թուրքիոյ հետ համատեղ զորավարութիւններու շարք կա-

տարած է, ինչպէս որ ըրած էր 2020 թուականի Սեպտեմբերին Արցախի/Լեռնային Ղարաբաղ ներխուժեցնելու քանի մը շաբաթ առաջ: Վտանգի այս կարմիր նախազգուշացումները կը յուշեն, որ Ատրպէյճանը, պատրաստուելով հնարաւոր ներխուժման, միաժամանակ կը փորձէ ահաբեկել Հայաստանը, որպէսզի վերջինս գիշի տարածքները եւ միջանցքի իրաւունքները՝ այդպիսով փորձելով խուսափիլ ներխուժումէն», կ'ըսուի յայտարարութեան մէջ:

Massis Weekly

Volume 43, No. 42

Saturday, November 11, 2023

Armenian Authorities Foil Terror Plot, Apprehend Five Suspects



YEREVAN— Five suspects have been arrested in Armenia for allegedly plotting a terrorist attack, as reported by the National Security Service (NSS).

According to the NSS, these suspects, along with unidentified accomplices, were planning a terrorist attack, the seizure of government buildings, and assassinations with the goal of disrupting the operation of government agencies.

Their intention was to dismantle the activities of government bodies.

Authorities conducted raids on the suspects' apartments and discovered firearms and ammunition, a drone, two gas cylinders supposedly intended as attachments, body armor, military fatigues, handcuffs, surveillance devices, computers, mobile phones, communication devices, ten unused SIM cards from Armenian and Russian communication operators, and documents outlining the preparations for the terror attack. They had codenamed their

plot "Northern Leaflet."

The suspects had also opened Ukrainian and Moldovan Telegram channels under the name "National Salvation Uprising" in order to "involve broad segments of the population in the terrorist attack."

Additionally, the suspects had purchased medical supplies and planned to move their families to Georgia before the attack.

The suspects had detailed plans for ambushing, surveillance, and retreating from the buildings.

The National Security Service stated that law enforcement officials are actively working to identify other accomplices of the suspects.

These terror suspects had carefully devised strategies for ambushing, surveilling, and retreating from buildings. They had even planned to distribute flyers and implement other procedures to involve accomplices and coordinate their actions.

Armenia and United States to Deepen Defense Ties



HOHENFELS . GERMANY — Lieutenant-General Eduard Asryan, the chief of the Armenian army's General Staff has visited the U.S. military headquarters and two training centers in Europe, underscoring Yerevan's efforts to deepen defense ties with the United States.

Lieutenant-General Asryan met with Lieutenant General Steven Basham, the deputy head of U.S. European Command (EUCOM), at the EUCOM headquarters in the German city of Stuttgart on Friday. They dis-

cussed "Armenia's security environment, defense reforms and the defense cooperation with the United States," read an EUCOM statement released afterwards.

The Armenian delegation began their visit to Germany with a tour at the Joint Multinational Readiness Center in Hohenfels to observe training activities. They also met with the Non-Commissioned Officer Academy as part of their aims to further develop the


Continued on page 4

New Publication:

"The Armenian Social Democrat Hnchakian Party: Politics, Ideology, and Transnational History"

The proceedings of an academic conference organized by AEBU/NSCA in October 2012 at Woodbury University (Burbank, CA) have been published this month in a groundbreaking book entitled "The Armenian Social Democrat Hnchakian Party: Politics, Ideology, and Transnational History." Edited by Professor Bedross Der Matossian and published by I.B.Tauris, an imprint of Bloomsbury Publishing UK, this pioneering book delves into the intricate history of the Social Democrat Hnchakian Party (SDHP). This significant Armenian revolutionary group operated in the Ottoman Empire, Russia, Persia, and the global Armenian diaspora, positioning itself within the broader context of global revolutionary movements.

The book meticulously dissects the origins, ideology, and regional history of the SDHP, exploring these aspects in detailed sections. Through insightful research, contributing scholars investigate the SDHP's role in 19th and 20th-century debates about socialism, populism, and nationalism. Beyond Armenian matters, the SDHP had a foundational Marxist perspective that defined its identity as a revolutionary political party. Scholars in the book draw on their expertise in languages and histories, including Armenian, Russian, Turkish, French, and



Persian, to study the party's emergence, its interactions with contemporary political parties, and its significance in pivotal events like the Armenian genocide, the formation of the first Armenian Republic, and the Soviet Armenia era.

Crucially, the book sheds light on the SDHP's significance not only in Armenian historiography but also in the broader realm of transnational revolutionary movements. It reveals the

Continued on page 4

Any Violation of Armenia's Sovereignty and Territorial Integrity Will Lead To Serious Consequences – US State Department

WASHINGTON, DC — The US Department of State has reaffirmed its strong support for the sovereignty and territorial integrity of Armenia.

VOA Armenian service asked the State Department to comment on the Lemkin Institute's latest Red Flag alert for genocide due to the alarming potential for an invasion of Armenia by Azerbaijan in the coming days and weeks.

In response the State Department emphasized that "the United States strongly supports Armenia's sovereignty and territorial integrity. We emphasized that any violation of that sovereignty and territorial integrity will bring serious consequences. We regularly emphasize our expectations, calling against the use of force, and continuously monitor the situation."



"Armenia is a close partner and friend of the United States, and we look forward to working with the Armenian authorities to strengthen Armenia's political and economic security," the United States Department of State said.

German FM Calls For New Armenia-Azerbaijan Peace Talks



YEREVAN — German Foreign Minister Annalena Baerbock urged Armenia and Azerbaijan to resume peace talks mediated by the European Union when she visited Yerevan on Friday.

“Germany supports the territorial integrity of Armenia and Azerbaijan, and this must be the basis for all peace negotiations,” Baerbock said after meeting with her Armenian counterpart Ararat Mirzoyan.

“I believe that European Council President Charles Michel’s efforts could serve as a bridge for establishing peace between the two countries. Therefore, the start of a new round of negotiations is important,” she told a joint news conference.

At the press conference Baerbock said: the “territorial integrity of Armenia and Azerbaijan is the basis for any negotiations for peace.”

“We want to accompany you on this path to a good future in the South Caucasus,” she said, urging both sides to “use this window for a negotiated peace.”

Baerbock also pledged an additional 9.3 million euros in aid to help Armenia deal with a refugee crisis sparked by the latest hostilities in Karabakh.

“Unfortunately, we still have serious concerns that ... Azerbaijan still has, in one way or another, territorial claims to Armenia,” Mirzoyan said during the press conference with Baerbock.

There are lingering fears in Yerevan that Azerbaijan could invade Armenia to open a land corridor to its Nakhichevan exclave. Baerbock, who was due to proceed to Azerbaijan on Saturday, declined to say whether Germany would support a freeze on imports of Azerbaijani gas and oil or other EU sanctions against Baku in the event of such invasion. She spoke out against any further “escalation in this region.”

During the press conference, Mirzoyan said that Armenia is interested in joining economic projects implemented in the region by the European Union.

“At the meeting with our German counterpart we discussed the importance of consistent assistance of the EU and its member states in promoting democratic reforms in Armenia. Other issues of the Armenia-EU partnership were discussed as well, particularly the expansion of the EU civilian monitoring mission in Armenia and Armenia’s involvement in the EU regional projects, including economic ones,” Mirzoyan said.

Mirzoyan also emphasized the importance of the development of bilateral Armenian-German interaction.

“The atmosphere in the neighboring countries is extremely important for the effective promotion of bilateral and regional programs,” Mirzoyan said, stressing that Yerevan highly appreciates Berlin’s efforts to establish peace and stability in the region.

Armenia’s Foreign Trade Grows by 45.8% to \$13.6 Billion in Nine Months of 2023

YEREVAN — Armenia’s foreign trade in January-September 2023 surged by 45.8% from the same time span of 2022 to over \$13.6 billion, the National Statistical Committee said.

Of CIS countries Armenia’s largest foreign trade partners were Russia (about \$4.8 billion, up 47.7% compared to the first nine months of 2022), Belarus (\$152.8 million, 16.6% growth) and Ukraine (\$67 million, 8% growth).

Armenia’s trade with the EU countries amounted to a little over \$2 billion with a 30.8% yoy growth. The five largest trade partners were Germany -\$495.4 million, (49.8% growth), Italy- \$316.1 million (33.7% growth), the Netherlands (\$267.2 million (34.5% growth), Poland – \$133.5 million, (2.1 times growth) and France – \$117.6

million, 49.8% growth.

Other large trade partners were China -\$1.6 billion (38.7% growth), UAE -\$726.3 million (2.2 –fold growth), the USA -\$548.4 million (96.3% growth), Iran -\$507,2 million, (2.2% growth), Japan – \$297.4 million (2.8-fold growth), Georgia -\$194.7 million (15.6% decline), Republic of Korea -\$153.4 million (2.3-fold growth) and Iraq -\$137.7 million (18.4% decline).

Exports

Exports from Armenia increased by 44.8% to over \$5.12 billion. Exports to Russia grew by 85% to over \$2.6 billion, exports to Belarus grew

Continued on page 4

Armenian Leaders Reject Russian Claims That Yerevan is Destroying Relations Between the Two Countries

YEREVAN — The Armenian parliament speaker Alen Simonian rejected on Friday Russia’s latest claims that it is systematically “destroying” relations between the two longtime allies.

The Russian Foreign Ministry spokeswoman, Maria Zakharova, made the claims on Thursday when she condemned a senior Armenian official’s participation in Western-backed peace talks on the conflict in Ukraine and meeting with the chief of Ukrainian President Volodymyr Zelenskiy’s staff. She called it a “demonstrative anti-Russian gesture of official Yerevan.”

Simonian suggested that Moscow does not want Yerevan to “communicate with partners on multilateral platforms” and is trying to maintain Armenia’s “existential dependence” on Russia.

“This is apparently the ‘right allied’ approach,” Simonian wrote in a Telegram post.

Echoing Prime Minister Nikol Pashinyan’s recent statements, Simonian also accused the Russians of not honoring their security commitments to Armenia and recalled their past large-scale arms deals with Azerbaijan.

Foreign Minister Ararat Mirzoyan also dismissed Zakharova’s complaints that Armenia’s state television and other pro-government media outlets have been spreading “Russophobic” propaganda.

“We believe that what our Russian partners are surprised by is the consequence of what we have seen on



various [Russian] airwaves,” Mirzoyan told Armenian lawmakers.

He also said that the Armenian government hopes to mend fences with Moscow and “move on like partners.” “But not everything depends on one side,” added Mirzoyan.

The Russian Foreign Ministry earlier deplored what it called “a series of unfriendly steps” taken by Pashinyan’s administration. Those included his assertion Armenia’s military alliance with Russia has proved a “strategic mistakes” and Yerevan’s acceptance of jurisdiction of an international court that issued an arrest warrant for Russian President Vladimir Putin in March.

For its part, the Armenian side has held Moscow responsible for Azerbaijan’s recent military offensive that led to the forced exodus of Nagorno-Karabakh’s entire Armenian population.

Israeli Extremists Enter Armenian Gardens in Jerusalem, Claim Ownership



JERUSALEM (Armradio) — A group of Israeli extremist settlers entered the Armenian Quarter’s Goverou Bardez [Cows’ Garden] on Sunday November 5, where the Armenian community was having a peaceful sit-in to prevent the further illegal demolition of the interior walls of the Cows’ Garden, Save the ArQ Movement reports.

Danny Rothman and George Warwar, representatives of Xana Capital, backed with about 15 armed settlers and attack dogs, demanded the expulsion of Armenians, calling it their land. Warwar threatened the community, exclaiming that he’ll “get them one by one.” The settlers were also active, announcing that the Armenians are all “Goys and when the Messiah comes, [they] will all die.”

The Armenian community refused to back down and stood firmly on the rightfully owned property. Save the ArQ Movement community leaders Hagop Djernazian and Setrag Balian and the legal team, led by international lawyer Karnig Kerkonian, convened an emergency meeting and a member of the team, Eitan Peleg, arrived on scene to negotiate the stand down.

Armenian Patriarch of Jerusalem Archbishop Nourhan Manougian also arrived on the scene and stood side by side with the Armenian community of Jerusalem, along with priests and bishops. The community stood strong, with 200 members in unity to prevent the takeover and

Continued on page 4

Rep. Pallone Calls for U.S. Humanitarian Aid to Armenia and Examination of Relationships with Aliyev and Erdogan

WASHINGTON, DC — Congressman Frank Pallone, Jr. (NJ-06) submitted the following testimony to the House Committee on Foreign Affairs during the annual Member Day Hearing:

“Chairman McCaul and Ranking Member Meeks, thank you for this opportunity to share several of my priorities that are under the jurisdiction of the House Committee on Foreign Affairs. As Co-Chair of the Armenia Caucus, I would like to highlight the grave and urgent need for humanitarian assistance for more than 100,000 refugees who were forced to abandon their homeland in response to Azerbaijan’s violent military aggression against the Armenian population of Nagorno Karabakh. I would also like to highlight the need to counter the destabilizing actions of autocrats and support our democratic allies and partners around the world.

First, I would like to highlight legislation I introduced in September that is under your Committee’s jurisdiction, the Supporting Armenians Against Azerbaijani Aggression Act of 2023 (H.R. 5683). Sadly, after I introduced this legislation, Azerbaijan launched a military offensive to ethnically cleanse the area of its native Armenian population that dates back thousands of years. There are aspects of this bill that I believe the Committee should take up. This includes sanctions against the autocratic Azeri regime that rules the country and those responsible for human rights abuses and war crimes. My legislation also includes \$30 million in humanitarian aid, \$10 million in assistance for Armenia through the foreign military financing program at the Department of State, \$650 million in annual assistance to the Armenian energy sector for fiscal years 2024 through 2026, and \$50 million for fiscal years 2024 through 2028 to promote United States-Armenian cooperation on science and technology.

However, given the situation on the ground after the most recent aggression by Azerbaijan, I would recommend the following:

First, given the dire plights of the refugees from Nagorno Karabakh, Congress and the Biden Administration must provide as much humanitarian support as possible. The Armenian government has identified \$1 billion in urgent housing needs for the over 100,000 refugees who were forced to abandon their homeland. These people have lost almost everything, from their basic possessions to their family homes.

Second, these refugees also require assistance with educational, medical, social protection, and other needs, which is estimated to cost \$360 million annually for at least the next two years. Since the United States was unable to stop this humanitarian disaster from unfolding, we must and should do our part to help these refugees during this vulnerable time.

Finally, Congress must repeal the waiver of Section 907 of the FREE-



